





այնպէս դարձուցած, որ կարծես լիազէմ է. առիճներու զոյգեր, դէմ առ դէմ կամ կոնակ կոնակի. անասնոյ մը հարածուրին ուրիշ անասունէ մը, եւ կռիւներ. հեծեալներ եւ ուրիշ պատկերներ յաճախ չափակցեալ զոյգերով ծառի մը երկու կողմը. երեւակայածին թեւաւոր չորքտանիներ եւ թռչուններ: Հայաստանի մէջ ազատութիւն կը տիրէր օրինական նիւթերու հանդէպ. առիճներու փոխարէն կը դրուէին արջեր, այծեր, եւ ուրիշ տեղական անասուններ, կամ բոլորովին երեւակայական կենդանիներ:

Ընդհանրապէս այս կարգի քանդակ առատ է ո՛չ Հայաստանի, ո՛չ Վրաստանի մէջ, եղածներն ալ ցրուած են մի առ մի եւ յախուռն (տխակ. 86, 1. 102, 2): Զարտուղութիւն մը կը կազմէ Ախթամարի եկեղեցին Վանայ լճին մէկ կողմէն վրայ: Հոս, հայկական ճարտարապետութեան գլխաւոր կենդրոնէն շատ հեռու, ճարտարապետներն խոր ազդեցութիւնը կրած են Միջագետքի եւ Սասանեան Պարսկաստանի արուեստներուն: Որմերը ծածկուած են բազմազգի գաղաններով եւ թռչունկան. կան նաեւ սուրբեր եւ աստուածաճշգրտան նիւթեր, եւ քանդակներէն շատերը բուրակի մէջ են (պատկերները տես Ստրչի-գովսկի, «Քրիստ. Եկեղ. արուեստի ծագումը», եւ Ռիւոյերա՝ «Մասմեոական ճարտարապետութիւն» գրքերու մէջ): Նման քանդակներու որոշ թիւ մը կը տեսնուի նաեւ Պթնի, Երեւանի մօտ (տխակ. 89, 90): Այս եկեղեցիները յիշեցինք վերը՝ Վրացի միջին եւ Նուրի եւ Պոլսկի ուսուական եկեղեցիներու առիթով, որոնք ունին նման նիւթեր եւ կրնան հայկական ազդեցութեան ներքեւ շինուած ըլլալ:

Հայկական եւ վրական ոճերը, նման ուսուականին, բիւզանդական ճարտարապետութենէն կը տարբերին այնու որ գառ զանգակատուն ունին: Թէեւ ձեւով միատեսակ չեն գանդակասները, բայց ընդհանրապէս կը վերջաւորին բայ կտուրով, որ կը բաղկանայ կոնաձեւ ծածկը կրող սիւներու օղակէ: Բացայայտ է, որ դա հայկական գիւտ է, թէեւ Ռիւոյրա կը համարի, որ «մինարտի» ձեւէ ներշնչուած է: Աչքառու գանդակատուն մը՝ բացորոշ կերպով հայկական տիպէ՝ կը գտնուի Հաղբատի մէջ: Զանգակատան ան-

կիւնները վարէն ներսանկուած են, եւ վերէն՝ դէպի քառակուսի անցքը կը կազմեն արտաքին անկիւնայից աղեղներ (squinche) իւրաքանչիւր ներսանկուածի վրայ (տխակ. 104):

Քաղաքական կռիւներու հետեւանքով ճարտարապետութեան գլխուն եկած դժբախտութիւններէն մին է ուսու-թրքական արդի սահմանադիժը, որ Հայաստանի կենդրոնը կը կտրէ, ճիշդ հոն ուր անոր հին ճարտարապետութեան մնացորդները հողի տակ ծածկուած են: Պարսիսկները Անիի հայկական այգերեմնի մեծ ու մայր քաղաքին, սահմանէն քանի մը հարիւր «եարդ» (= 0,9145) հեռութուրը Պետութեան մէջ կը գտնուին, եւ հայկական ճարտարապետութեան այս խկական թանգարանը, իւր լաւագոյն շէնքերով, կը մնայ անմատչելի:

Անիի կաթողիկէն արժանի է (եթէ տալիւն գոյութիւն ունի) շատ աւելի մեծ համբաւի, քան որ այժմ կը վայելէ: Արտաքուստ՝ ճարտարապետութեան սիրուն նմոյշ մըն է ինքնատիպ հայկական դրոշմով՝ շատ գեղեցիկ փակաղեղներով: Իսկ ներքուստ կը նմանի դոթական եկեղեցիներուն՝ որոնք արեւմտեան Եւրոպայի մէջ երկու դար յետոյ տեսնուեցան: Խրճաձեւ մոյթերու զոյգեր կը կրեն բարձր սրակամար մը, եւ երկու կողմը կայ թեւ մը նեղ սրաղեղներով նման «վաղ Անգլիական» ոճին: Ապահովաբար զուգաձեւ զարգացման մը ակնբախ մէկ օրինակն է, եթէ գոթականի հետ աղերսի մը ամէն մտածութիւն լքենք:

Բազրատունեաց հարստութեան ժամանակ՝ Ժ. եւ ԺԱ. դարերուն՝ հայկական թաւաւորութիւնը հասած էր մեծ զօրութեան եւ բարգաւաճումի եւ գեղարուեստի մէջ կարկառուն դերքի: ԺԱ. դարու կէսին սակայն երկիրը ասպատակուեցաւ Բիւզանդացիներէ, ու ոչ շատ վերջ՝ Սելջուկեան թուրքերէ: Ուժեղ եւ անկախ Հայաստան մը դադրեցաւ գոյութիւն ունենալէ, բայց ճարտարապետութիւնը շարունակուեցաւ նուազ չափով մինչեւ Մոնղոլ առաջին ներխուժումը՝ ԺԳ. դարու սկիզբները: ԺԲ. դարուն Հայաստան վրական Բազրատունեաց — հայկական տան մէկ ճիւղին — ենթարկուեցաւ եւ այնուհետեւ Վրացիք խաղացին գլխաւոր դերը Անգլիոյ վրայ մէջ: Անոնց ձեռքին մէջ ճարտարապետութիւնը մասամբ նոր ձեւ մը ստացաւ, զոր լաւ եւս վրական քան հայկական կոչելու է:

4. ՎՐԱՍՏԱՆ

Վրաստանի եւ Հայաստանի ճարտարապետութիւններն իրարմէ խստիւ զատորոշուած չեն: Չուրինաչլիլի, որ անոնց անկախութիւնը կը շեշտէ, կ'ըսէ թէ այս երկու ոճերուն միջեւ եղած տարբերութիւնը նման է Ռեմբրանտի և Վան Գոյի զ. օ. Ֆրանսուայի այն տարբերութեան, որ կայ զ. օ. Մալե Գերմանիայի ոճմանական ոճին մէջ: Սակայն շատերն այսքան մեծ տարբերութիւն դժուարաւ պիտի նշմարեն: Բայց եւ այնպէս վրական շինուածքի ընդհանուր տեսքը զատորոշ է, եւ այս՝ գլխաւորաբար հետեւանքն է քանդակազարդի մանրամասնութեանց, եւ անոր բաշխումին՝ շինութեան վրայ, ինչպէս այժմ պիտի բացատրենք:

Վրական հողի վրայ շինուած ամենահին եկեղեցիները — Չուրինաչլիլի «վաղ Քրիստոնէական» շրջանէն — յիշեցինք վերը՝ Հայաստանի առթիւ, եւ հաւանորէն Հայերու զօրծեր եղած են անոնք: Հոս պիտի յիշեմ գլխաւորաբար այն շէնքերը, որոնք կանգնուած են — ենթադրաբար — Վրացի ճարտարապետներէ վրական քաղաքակրթութեան (Չուրինաչլիլի «Միջնադարեան» շրջանի կիսուն, Բինաչլիլի «Միջնադարեան» շրջանի վերջին աստիճան) (Վ. Գ. դար): Այս ժամանակի վերջին աստիճանները Հայաստան վրական թաւաւորութեան մաս եղաւ, եւ վրացիներու ճարտարապետութիւնը, որ ուղղակի հայկական ոճի վրայ հիմնուած է, Հայաստանի ինչ ինչ մասերու վրայ սփռուեցաւ տարբեր ձեւով: Վրաստան յամենայն դէպս նկատելու է իբր Հայաստանի առաջին ճարտարապետական գաւառը, կամ աւելի եւս՝ մասնաւորապէս Վրաստանի ճամբով էր, որ հայկական ճարտարապետութեան ազդեցութիւնը զգացուեցաւ արեւմտեան Եւրոպայի մէջ...

Ինչպէս Հայաստանի մէջ՝ նոյնպէս հոս կարեւոր դեր կը խաղայ երկրաչափական զարդը — ընդարձակ միջանկուածներ — եկեղեցւոյ զարդարանքին մէջ: Բայց հայկականէն տարբեր նկարագիր մը ունին անոնք: Henri Focillon, Բալթիկ շախմատի գրքին յաջորդէ քանին մէջ, սա խօսքերով կը գլխաւորէ նիւթը. «վրական միջանկուածը միատարր զարդ մը կ'արտադրէ: Սեղմ տարրները կը պահեն ձեւերու միութիւնը... հայկական զարդարիչներն ընդհակառակն խաչաձեւումներով կը գործեն. վերլուծական հայեցողութեան ոյժը դերքն է կ'առաջնորդէ տարբարութեան ոյժը դերքն է»:

ձեւու ձեւերը անկորանալի չորութեամբ մը, եւ ձեւերու միութիւնը էպպէս կը քայքայի ի նպաստ տարրերու սլայծառութեան: Այս տարբերութիւնները զգալի են նաեւ քանդակի մէջ. մինչ Հայաստանի մէջ՝ նա պարզ դժամութիւն է, շեշտուած նուրբ շքուղիներով, վրական գործուածքն աւելի պարզ է, նուազ գծաւոր եւ աւելի երանգաւոր»:

Ուրիշ բաներով, Հայերն աւելի կը մօտենան Մասմեոական եղանակին՝ զարդին տարրերը սփռելու եւ տարբարլուծելու. Վրացիք կը մօտենան Ռոմանական ճարտարապետներու եղանակին՝ գանոնք կենդրոնացնելու:

Վրական ճարտարապետութիւնը կը հայթայթէ յիւրաւի միջնադակ մը ընդ մէջ Քրիստոնէայ Արեւմուտքի եւ Իսլամի անմասն ճարտարապետութիւններուն:

5. ԿՈՎԿԱՍՏԱՆ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ ԱՐԵՎՄՈՒՏԻՒՄԵՑ

Հայկական եւ վրական ազդեցութեան հարցը Արեւմուտքի վրայ՝ արտակարգ վիճակով բանութեան նիւթ է, ինչպէս վերը զիտել տուինք: Սակայն նիւթս հետազոտողներէն աւելին պահանջողականներն անգամ կ'ընդունեն չափով ազդեցութիւն մը: Ռիւոյրա նին որոշ չափով ազդեցութիւն մը: Ռիւոյրա կը գրէ. «Հայաստանի մէջ էր որ առաջին անգամ գործածուեցան զմբեթներ բարձր լծով եկեղեցիներու վրայ, եւ զարդարուեցան փակաղեղներով որոնց մէջ աղեղները նուրբ սիւներէն կը բխեն». աստի կը հետեւի, որ բարձր լուծը կրնայ Հայաստանէն տարածուած ըլլալ զէպի Արեւմուտք: Եւ դարձեալ. «Շաւրշաւ զէպի Արեւմուտքը հայկարունակեալ նրբաձեւ փակաղեղներու հայկական գործածութիւնը ազդած է ոչ միայն Արեւելքի, այլ նաեւ Արեւմուտքի, նոյն իսկ Իտալիոյ վրայ, տալով ծնունդ այս կարգի զարդարանքի»:

ճարտարապետական ուղղաչափի վրայ՝ Ռիւոյրայի գլխաւոր հակառակորդին՝ Ստրչի-գովսկիի կը պատկանի այն տեսութիւնը, որ Հայաստանի կը վերագրէ կենդրոնական տեղ մը եւրոպական ճարտարապետութեան պատմութեան մէջ եւ քառակուսոյ վրայ կաթուածութեան մէջ եւ քառակուսոյ վրայ կաթուածութեան մէջ կը հայտնիքէ՝ հիւսիսային Իրանէն յիշեցնելով հայրենիքէն՝ հիւսիսային Իրանէն եւրոպա փոխադրելու մէջ գրեթէ ամբողջ եւրոպա փոխադրելու մէջ գրեթէ ամբողջ բաժինը: Հայկական գանազան յատակազծեր նա սփռուած կը գտնէ հարաւային եւ արեւմտեան Եւրոպայի երկիրներուն մէջ: Աւելի շափաւոր ու հաւասարակչիւ խուզարկուներ շատ բան կը վերագրեն ինչպէս երբեմն

52-422





